

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՆԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Անի Սարիբեկյանս, 2020 թվականի հոկտեմբերի 1-ից աշխատելով որպես ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

- Քաղաքացիների ընդունելության, դիմումների ընդունման, ուսումնասիրության, փաստաթղթերի տրամադրման գործընթացի կազմակերպում,
- «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993 թվականի, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի 1980 թվականի, «Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին» Հաագայի 1996 թվականի կոնվենցիաների շրջանակներում օտարերկրյա պետությունների կենտրոնական և իրավասու այլ մարմինների փաստաթղթաշրջանառության ապահովում, գրությունների պատրաստում, այդ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում, թարգմանությունների ապահովում, այդ թվում՝ օտարերկրացիների դիմումների պատասխանների պատրաստում,
- վերը նշված կոնվենցիաներին կից ուղեցույցների, ձեռնարկների, երեխաների որդեգրման ոլորտը կանոնակարգող միջազգային փորձի ուսումնասիրություն, տեղեկատվության հավաքագրում և ներկայացում,
- 1991 թվականից Հայաստանի Հանրապետությունում որդեգրված երեխաների, վերջիններիս որդեգրած անձանց տվյալների, որդեգրման պետական գրանցումների, որդեգրված երեխաների հետորդեգրման զեկույցների փաստաթղթային և էլեկտրոնային